







ՄԻԱՑԵԱԼ ՆԱԸԱՆՁԵՐՈՒ ՆԱԽԱԳԱՏԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ ՈՉ ՌԻՏԻ ԿԸ ՉՕՐԱԿՑԻ

Ուշադիր կերպով քննել է ետք Պուշ- 2 էյնի եւ Կոր-Լիպրմընը թեկնածու պոզիցիայի վրա, Հ. Յ. Դ. նախագահական Ամերիկայի Հայ Դատի 3 անդամները երեք- շաբթի օր յայտարարեց, թէ այս տարուան նախագահական ընտրություններուն պարտական կեցուածք պիտի չորոգեզրէ ռեւէ թեկնածուի նկատմամբ: Փոխարէնը, Ամերիկայի Հայ Դատի 3 անդամները կոչ կ'ուղղէ ամերիկահայութեան, որպէսզի լարէ իր ուժերը եւ աչքառու տարողութեամբ բազմա- պատկէ իր ժողովրդային աշխուժութիւնը յառաջիկայ չորս տարիներուն:

Ամերիկայի Հայ Դատի 3 անդամները կը հաւատայ, որ ռեւէ թեկնածուի ընտրութեան պարագային, յաջորդ վարչա- կազմը պիտի ընդառաջէ ամե- րիկահայութիւնը յուսով հար- ցերուն, եթէ ամերիկահայու- թիւնը նպատակաւայ եւ ազդու կերպով աշխատանք տանի: Քոնկրէտի թեկնածուներուն գծով Ամերիկայի Հայ Դատի 3 անդամները յայտարարած պարտականութիւնները այս գործընթացին կարեւոր տարրերէն են՝ կարեւոր տեղեկութիւններ հայթայթելով ամերիկահայու- թեան, որպէսզի Քոնկրէտին մէջ մեր համայնքի վայելած ուժեղ պարտականութիւնը ամրապնդուի:

Մինչ թեկնածուներէն ոչ մէկը ամբողջութեամբ կը համընկ- նի Ամերիկայի Հայ Դատի 3 անդամները պարտականութեան չափանիշներուն, անոնց- մէ իւրաքանչիւրը մեր համայն- քին տուած է պատմամբ, հա- ւատարմութիւն, որ ենթական պիտի ընդառաջէ մեր կարգ մը նախա- պատուութիւններուն: Ամէնէն յատկանշականը այն է, որ կա- նախարհ Պուշ-Ընդունած է հայ ժողովուրդին դէմ գործուած «ցեղասպանական արշաւը» եւ խոստացած է, որ ընտրուելու պարագային, «պիտի երաշխա- տրէ, որ Մ. Նահանգները պատ- շածօրէն կը ճանչնան հայ ժողո- վուրդի ողբերգական տառա- պանքները»: Ի հակադրութիւն

ասոր, փոխ նախագահ Ալ Կոր մերժած է Հայկական Յեղասպա- նութիւնը բնութագրել իբրեւ «Յեղասպանութիւն», առանց նշելու նաեւ, թէ իր ապագայ վարչակազմը ի՞նչպէս պիտի վե- րաբերի այս չափապանց կարե- վոր հարցին: Միւս կողմէ, Կոր ղեկավար դեր խաղաց Ամերիկա- Հայաստան տնտեսական մաս- նայատուկ խմբակի կազմու- թեան մէջ, որպէսզի Հայաստա- նի եւ Ամերիկայի միջեւ տնտե- րական եւ ներդրումային կապե- րը վարզանան:

Յայտարարելով այս որոշու- մը՝ Ամերիկայի Հայ Դատի 3 ան- անդամները մասնայատուկ կեր- պով կը նշէ Քլինթոնի վարչա- կազմին կողմէ այն չափապանց ուժեղ միջամտութիւնը, զոր ան կատարեց Հայկական Յեղա- սպանութեան քանադէպի (H.Res. 596) ժողովրդավար գործընթա- ցէն ներս, ինչպէս նաեւ Ներկա- յացուցիչներու Տան իսունակ Տե- նիս Հասթըրթի յանձնարար վար- չակազմէն եւ թրքական կառա- վարութեան եկած ճնշումին՝ բանաձեւի քուէարկութեան առաջըր տնելու գծով: Այս քայ- լերը ամերիկահայութեան մէջ հաւատքի յուրջ խախտում մըն են, քան մը, որուն դրդապատճա- րը ոչ մէկ թեկնածու քննադա- տեց:

Այսօր ամերիկահայութեան դէմ ցցուած մարտահրաւէրն է՝ աչքառու տարողութեամբ ընդարձակել մեր աշխուժու- թիւնը եւ ուժեղացնել մեր ձայնը մեր համայնքը շահագրգռող հարցերու հանրային քաղաքա- կանութեան քննարկումներու ընթացքին: Կոչ կ'ուղղենք բոլոր ամերիկահայերուն, որ ընդառա- ջեն այս մարտահրաւէրին՝ գոր- ծադիր իշխանութեան նկատ- մամբ աւելի են աքրուն եւ ներ- գործուն կեցուածք դրսևորելով ու Նոյեմբեր 7ին, 107րդ Քոնկ- րէտի ընտրութեան, Ներկա- յացուցիչներու Տունէն ու Օրո- կոյտէն ներս մեր բարեկամե- րուն կարելի առաւելագոյն պո- րակցութիւնը ցուցաբերելով:

Հ. Յ. Դ. ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ԴԱՏԻ ՅԱՆՁՆԱԽՈՒՄԲԸ

ԾԵՐԱԿՈՅՏԻ ԵՒ ՆԵՐԿԱՅՈՒՅՑՈՒՑԻՉՆԵՐՈՒ ՏԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐՈՒ ԶՕՐԱԿՑՈՒԹԻՒՆ

Յայտարարութեամբ մը Հ. Յ. Դ. Ամերիկայի Հայ Դատի 3 անդամները տուած է ցանկը Օրոկոյտի եւ Ներկայացուցիչներու Տան այն թեկնածուներուն, որոնց ինք գորակցութիւն կը յայտնէ: Այս յայտարար- ւութիւնը Ամերիկայի Հայ Դատի 3 անդամները հ- ֆաքսով եւ ի - մէլով. ան նաեւ կը գտնուի յանձնա- խումբին ուեկայայտին մէջ (www.ANCA.ORG.):

Հայ Դատի 3 անդամները գորակցութիւն կը յայտ- նէ թէ՛ դեմոկրատ եւ թէ՛ հանրապետական թեկնածու- ներու՝ 25 նահանգներու մէջ: Յանձնախումբին կողմէ նշուած թեկնածուներուն մէջն են մեծ թիւը կը գտնուի Քալիֆորնիայ նահանգին մէջ (1 Օրոկոյտի թեկնածու եւ 3 Ներկայացուցիչներու Տան թեկնածու): Այս թեկ- նածուներուն շարքին յիշենք՝ Ժորժ Ռատանովիչ (Հանր. Քալիֆորնիայ), Ատամ Շիֆ (Դեմ. Քալիֆոր- նիայ) Ռիչըրտ Կէպլանթ (Դեմ. Միս.) Ժորժ Փալոն (Դեմ. Նիւ Ճըրզի), Իսկ Օրոկոյտի համար առաջադր- ուած թեկնածուներու շարքին յիշենք՝ Էտուարտ Քե- նետի (Դեմ. Մասս.) Ռիք Լալիու (Հանր. Նիւ Եորք), Փոլ Սարպանէս (Դեմ. Մերիլենդ):

ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐՈՒ ՀԻՄՆԱՐԿԻՆ ՄԵՉ՝ ՊԱՐՍԿԵՐԵՆ ԴԱՍԱԽԱՆԴՄԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԼԵԶՈՒՆԵՐԵՆ ՄԵԿԸ

Պրիւսովի անուան օտար լեզուներու հիմնարկի գի- տական խորհուրդին եւ Հայաստանի մէջ Իրանի դես- պան Մոհամէտ Ֆահրաբ Քոնկրէտի հետ 31 Հոկտեմբե- րի Հանդիպման ժամանակ հիմնարկի նախագահ Սու- րէն Չոլեան նշեց, որ յառաջիկայ տարի պարսկերէնը պիտի դառնայ դասաւանդման հիմնական լեզուներէն մէկը:

Յայտնենք, որ պարսկերէնը հաստատութեան մէջ երրորդ տարին ըլլալով կը դասաւանդուի եւրոպական լեզուներուն կողքին:

Իրանի դեսպանը խոստացաւ յառաջիկայ մէկ ամ- սուան ընթացքին հիմնարկին մէջ հիմնել պարսկական գրադարան. ան կարեւոր նկատելով քանի մը լեզուներ- րու իմացութիւնը, նշեց, որ այս մէկը օգտակար է մի- ջազգային յարաբերութիւններու ամրապնդման եւ զարգացման գործին մէջ: Ան յիշեցուց նաեւ, որ ՄԱԿի սահմանած չափանիշներով, երրորդ հազարամեակի մարդը պէտք է տիրապետէ երկու լեզուի եւ կարենայ օգտուիլ համակարգիչէն:

Հանդիպման աւարտին Սուրէն Չոլեան Իրանի դես- պանին յանձնեց հիմնարկին բարձրագոյն պարգեւ - յու- շանուէրը՝ զայն առաջադրելով իրբեւ հիմնարկի գիտա- կան խորհուրդի լիւրաւ անդամ:

Մ. Քոնկրէտի Հանդիպումը ունեցաւ նաեւ հիմնարկի ու- սանդներուն հետ:

ԱՄԵՐԻԿԱԿԱՅԻ ԿԵԱՆՔ

ՊՈԼՍՈՅ ՄԻՒԹԱՐԵԱՆ ԱՆՈՒՅ ՄԻՈՒԹԵԱՆ ԹԱՏԵՐԱԽՈՒՄԻՆ ԵԼՈՅԹՆԵՐԸ՝ ՆԻՒ ԵՈՐՔԻ ԵՒ ԼՈՍ ԱՆՃԵԼՍԻ ՄԵՉ

Պոլսոյ Միւթարեան Սանուց Միութեան թատե- րախումբը, յայտնի բեմադրիչ Հերմոն Վարիշի ղեկավարութեամբ, կը պատրաստուի իր թատերա- խաղերէն մէկը ներկայացնել Նիւ Եորքի եւ Լոս Ան- ճելսի մէջ: Ներկայացուելիք թատերախաղը կը կրէ «Նքի դոք ըլլայիք, ինչ կ'ընէք» խորագիրը: Թատերախումբը Միացեալ Նահանգներ հրաւի- րողն է Նիւ Եորքի Հայ - Ամերիկեան Երիտասար- ղաց կեդրոնը: Պոլսոյ Միւթարեան Սանուց Միու- թեան վարիչները համաձայնութիւն կնքեցին Լոս Անճելսի Հայկական Միութեան հետ եւ ներկայա- ցում մըն ալ ապահովեցին Լոս Անճելսի մէջ: Նիւ Եորքի ներկայացումը տեղի պիտի ունենայ 12 Նո- յեմբերին, իսկ Լոս Անճելսին՝ 16 Հոկտեմբերին:

ԳԱԳԻԿ ՋԶԱՆԳԻՐԵԱՆԻ ՀԱՄՈՋՈՒՄՈՎ

27 ՀՈԿՏԵՄԲԵՐԻ ԳՈՐԾԻՆ ԵՏԻՆ ԱՆՅԱՅՏ ՈՒՎԵՐ ԿԱՆ

Շարաթ, 28 Հոկտեմբե- րին, խումբ մը լրագրող- ներու հետ ունեցած իր հանդիպման ընթացքին գիւնուորական դատախազ Գրագիլ Ջահագիրեան հա- մոզում յայտնեց, թէ Ազ- գային ժողովին մէջ անց- եալ տարուան 27 Հոկտեմ- բերին տեղի ունեցած ոճ- րային արարքը նախագիծ- ծրագրուած եւ անոր իրա- գործման համար ուղղու- թիւն տրուած էր, սակայն քննիչ արարքը ղեկ չէ յա- ջողած բացառապէս ոճի- րին ետին կանգնողները:

Իրն չվստահելու հարցին անդրադառնալով՝ զին- ւորական դատախազը կարծիք յայտնեց, որ Մա- նուկարեան իր փաստերը կրնայ հրապարակել մա- մուղով: Գալով նախկին վարչա- պետ Արամ Սարգսեանի՝ Ջահագիրեանին վստահե- ծրագրուած եւ անոր իրա- գործման համար ուղղու- թիւն տրուած էր, սակայն քննիչ արարքը միշտ ալ կրնան զիմել՝ գործը զլխաւոր դատախազութեան փո-

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴՐԱՄԱՏՆԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՌԱՋԱՏԱՐՆԵՐԸ

Ընթացիկ տարուան երկրորդ եռամսեակի արդիւնք- ներուն համաձայն, Հայաստանի առեւտրական դրամա- տուներու առաջատարներ ճանչցած են «Փրոմիթես» եւ «Էլքը. Էս. Պի. Սի. - Հայաստան» դրամատուները, «Թրաք Պալքը», եւ «Հայկ. քոնոմիսիա»-ը: Լաւ ցուցանիշներ ունին նաեւ «Արտիլիան»-ը, «Հայկերաբար»-ը, «Քոնվիլիան»-ը, «Հայկերա- պան»-ը, «Հայկապ», «Քրոտիթ - Նիքսոն», Հայկական զարգացման, Գիւղացիական փոխ օգնութեան եւ Միջ- սեւեռական առեւտրական դրամատուները: Յայտնենք, որ «Արտ Մարտ» խորհրդատուական ընկերութեան վարկաշաղկի ծառայութեան վերոյիշ- եալ դասակարգումը հիմնուած է դրամատուներու կողմ- մէջ գնահատման լրատուական միջոցներուն մէջ հրա- պարակուած տուեալներուն վրայ՝ ըստ յուսալքութեան պաշարի, ֆինանսական հաւասարակշռութեան, աշ- խուժութեան հաստիքաբերութեան եւ այլ գործօննե- րու:

ՔՈՉԱՐԵԱՆ Կ'ԸՆԴՈՒՆԻ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅ ՕԳՆՈՒԹԵԱՆ ՖՈՆՏԻ ՊԱՏՈՒԻՐԱԿՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի նախագահ Ռոպէրթ Քոչարեան 1 Նո- յեմբերին ընդունած է Ամերիկայի Հայ Դատի Ֆոնտի հոգաբարձուներու խորհուրդին անդամները:

Հանդիպման ընթացքին Քոչարեան նշած է, որ Ֆոն- տին միջոցներով Հայաստանի մէջ իրականացուող ծրա- գիրները բարձր կը գնահատուին եւ ժողովուրդին, եւ իշխանութիւններուն կողմէ:

Նախագահը ըսած է, թէ անթոյլատրելի է, որ երկ- րաշարժէն տաններկու տարի ետք տակաւին գոյուցութիւն ունենայ Ազգային գոտիի հասկացողութիւնը: Ան առաջ- նահանգ խնդիր համարած է նաեւ Լեւոնային Ղարաբա- ղի Հանրապետութեան Հիւսիս - Հարաւ մայրուղիի կա- ռուցումը:

Ռոպէրթ Քոչարեան պատուիրակութեան տեղեկա- ցուցած է, որ ընթացքի մէջ են Հայաստանի մէջ մնա- յուն կերպով գործող երիտասարդական կեդրոնի մը ստեղծման աշխատանքները: Կեդրոն մը, ուր կանոնա- ւոր կերպով տեղի ունենան բոլոր պարտութիւններէն եկած երիտասարդներու հաւաքներ:

ԱՐԿԱԳԻ ՎԱՐԴԱՆԵԱՆ 10 ՕՐՈՒՄՆ ԲԱՆՏԱՐԿՈՒԹԵԱՆ Կ'ԵՆԹԱՐԿՈՒԻ

«21րդ դար» անկախ միջազգային ընկերակցու- թեան նախագահ Արկադի Վարդանեան 10 օրով բանտարկուեցաւ, առանց արտօմոնիթեան հանրա- հաւաք կազմակերպելու համար:

Ըստ վերոյիշեալ լուրը հաղորդած Ա. Վար- դանեանի կնոջ՝ Էլլենա Վարդանեանի, 30 Հոկ- տեմբերի երեկոյեան քանի մը տասնեակ ոստի- կաններ, առանց համապատասխան արտօմոնի- րի, ներկայացած են «գրոյց»ի համար ոստիկա- նատուն հրաւիրած են իր ամուսինը:

Անոնք տան մուտքին, թիկնապահներու արգել- քը անտեսելով, կտրելով դարպասը, ապա տան դուռը, ներս ներխուժած են սպանալիքով ան- յայտ ուղղութեամբ տարած են Ա. Վարդանեանը, անոր պաշտպան փաստաբան Կարօ Կարապետ- եանը եւ «Ա.Ի.» հեռատեսիլի թղթակից Մհեր Ար- շակեանը: Վերջինս նոյն օրը ազատ արձակուած է:

Աւելի ուշ է. Վարդանեան ոչ պաշտօնական, սակայն հաւաստի աղբիւրներ տեղեկացած է, որ իր ամուսինը 10 օրուան բանտարկութեան դատա- պարտուած է, իսկ պաշտպան փաստաբանը՝ 7:

Ա. Վարդանեանի կազմակերպած հանրահա- ւաքին գծով կարգ մը պատգամաւորներ յայտա- րարութիւններ կատարեցին:

Այսպէս, Ազգային ժողովի Հ. Յ. Դ. խմբակ- ցութեան քարտուղար Կիմ Բալայեանի կարծի- քով, Արկադի Վարդանեանի կեցուածքը անձնա- կան չէ, այլ յատուկ պատուի մը կը կատարէ ան, իսկ «Օրինաց Երկիր» խմբակցութեան անդամ Սամուէլ Աւետիսեանի համաձայն, Ա. Վարդա- նեանի արարքները հերոսանալու անօրինական փորձեր են:

Ըստ Ա.Փ.Մ.ի խմբակցութեան անդամ Օւարշ Բոչարեանի, թէեւ հանրահաւաքը ժողովուրդին դժգոհութեան արդիւնքն է, սակայն կազմակեր- պիչները երկիրը ստեղծուած ծանր իրավիճակէն դուրս բերելու յստակ ծրագիր կամ մօտեցումներ չունին:

Միւս կողմէ, «Միասնութիւն» խմբակցութեան քարտուղար եւ Հայաստանի ժողովրդական կու- սակցութեան անդամ Վարդան Մկրտչեանի հա- մաձայն, պէտք է հասկնալ արտայայտուած դժգո- հութիւններուն դրդապատճառները:

ԱՐՓԱ - ՍԵԻԱՆ ՓԱՊՈՒՂԻՆ ՎԵՐԱԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՉԵՆ ՖԻՆԱՆՍԱԻՈՐՈՒԱԾ

Երեքշաբթի, 31 Հոկտեմբերին, Հայաստանի գիւ- ղատնասութեան նախարարութեան ջրային եւ տնտե- սական ենթակառուցելու գարգացման վարչութեան պետ Ռազմիկ Գրիգորեան յայտնեց, թէ Արփա - Սեւան փապուղիին ոչ բարեօք վիճակը վերջին տասը տարիներ- րուն վերակառուցման աշխատանքներ չկատարելու պատճառով է:

Ըստ Ռ. Գրիգորեանի, երկու տարիէ ի վեր պատ- րաստ են կարգ մը բաժիններու կառուցման թեքնիք փաստաթուղթերը, իսկ քանդուած բաժինները վերակա- ռուցելու համար համաձայնագիր կնքուած է «Արփա - Սեւան» ընկերութեան հետ:

Վերոյիշեալ փաստաթուղթերը ներկայացուած են Հայաստանի ելեւմուտքի եւ տնտեսութեան նախարար- ւութեան՝ ֆինանսաւորման ակնկալութեամբ, ինչ որ մինչեւ օրս կը ձգձգուի:

Հակառակ փապուղիին կրած վնասներուն, ընթացիկ տարուան 30 Հոկտեմբերի դրութեամբ Արփա - Սեւա- նով Սեւանայ լիճ մուտք գործած է 286,7 միլիոն խորա- նարդ մեթր ջուր՝ անցեալ տարուան նոյն ժամանակա- միջոցի 277,05 միլիոն խորանարդ մեթրին դիմաց:

Advertisement for BANKERS ASSURANCE SAL, featuring logos for USCTH and MedNet, and contact information for the company.

# ՉԱՒԱԽՔԱՀԱՅԵՐԸ ՄՏԱՀՈԳ՝ ՌՌՏԱԿԱՆ ՉՕՐՔԵՐՈՒ ԵՂ ԱՓՈԽՈՒԹԵԱՄԲ

Վերջերս Ջալալքելի խնդիրին շուրջ Հայկական մամուլին մէջ լոյս տեսած նիւթերուն առնչութեամբ պարզարանումներ տարու համար «Հօր Հայրենիք» կուսակցութեան երիտասարդական թիւը 31 Հոկտեմբերին ուսանողներու հետ հանդիպումի մը հրահրած էր կուսակցութեան փոխ նախագահ Ստեփան Մարգարեանը:

Ըստ Ս. Մարգարեանի, մամուլին աշխուժութիւնը պայմանաւորուած է վարձարների զինուորական խարխուխտն ուսական ստորարաթանումներու տեղափոխումով:

Հակառակ անոր որ առայժմ Ախալքալաքի զինուորական խարխուխտ մասին իրաւական թիւերը չկան, Ջալալքելի Հայրենիքը ներքին վարչութիւնը, որ իրավիճակի փոփոխութեան պատճառով ուսական զօրքերը կրնան ամբողջութեամբ տեղափոխուի:

Ս. Մարգարեանի կարծիքով, հայրենակ երեք շրջանները՝ Ախալքալաքը, Ախալցխան եւ Պոկտանովքան ընդգրկելով Սամցխէ - Ջալալքելի կազմին մէջ, վրացի իշխանաւորները գործնական ոչ մէկ քայլ կ'առնեն տեղի հայութեան ընկերային - տնտեսական, կրթական եւ մշակութային հարցերը լուծելու առնչութեամբ:

Անդրադառնալով Ջալալքելի ընկերային - տնտեսական հարցերուն՝ «Հօր Հայրենիք» կուսակցութեան փոխ նա-

խագահը նշեց, թէ աշխատանքներու բացակայութեան պայմաններուն մէջ, յատկապէս գիւղերուն մէջ, բնակչութեան մօտ կանխիկ դրամը կը բացակայի: Հայրենիքն շատեր Ռուսիա աշխատելու կը մեկնին, ինչ որ կրնայ լուրջ հարցականի տակ դրուել, եթէ Ռուսիոյ եւ Վրաստանի միջեւ գործէ այցազրային (վիզա) մուտքի կարգ:

Ինչ կը վերաբերի մեխանիզմի թուրքերու վերաբնակեցման հարցին, Ստեփան Մարգարեան յայտնեց, որ այս հարցը լուծելու համար Եւրոպական խորհուրդը ճշտում կը բանեցնէ Վրաստանի վրայ, սակայն Վրաստանը չի գոհացներ թուրքերու հետ իր սահմանամերձ գոտիները թուրքերով բնակեցնելու հեռանկարը:

Այս իրավիճակին մէջ, ըստ Մարգարեանի, Վրաստանի իշխանութիւնները կը կարենան հմտօրէն օգտագործել Հայերու գործօնը՝ Եւրոպական խորհուրդին ներկայացնելով, թէ մեխանիզմի թուրքերուն բնակեցման կտրականապէս դժմ են նոյնինքն հայերը, եւ իրենք չեն կրնար այդ հարցը լուծել ազգամիջեան բխումներու գնով:

Ըստ Ս. Մարգարեանի տուեալներուն, Ախալքալաքի եւ Պոկտանովքայի 90, իսկ Ախալցխայի բնակչութեան 40-45 առ հարիւրը հայեր են: Սամցխէ - Ջալալքելի մէջ հայերու թիւը կը կազմէ 60 առ հարիւրը:

## ԱՌՊԵՅՃԱՆՈՒՄ ԸԱԿԱՆԱՅԿԱԿԱՆ ԶՆԱԳԱՐՈՒԹԵԱՆ ՆՈՐ ԱԼԻԵ Ե ԲԱՐՁՐԱՆՈՒՄ

### ՊԱՔՈՒՆ ԴԺԳՈՀ Է ԵՐԵՒԱՆԻՑ, ՄՈՍԿՈՒԱՅԻՑ, ԹԵՀՐԱՆԻՑ

Ռուս - ազրպէյճանական յարաբերութիւններում նկատուող որոշակի ջերմացումը Պաքուի դիտորդներին առիթ տուեց ենթադրելու, թէ Մոսկուան արտաքին քաղաքականութեան առաջնահերթութիւններում վերանայումներ է անում: Սակայն Վրաստանից Հայաստան ուսական ռազմական կազմածնների տեղափոխումը Ազրպէյճանի իշխանական շրջանակներում հակահակական եւ հակաուսական ջղաջարութեան նոր ակիբ բարձրացրեց: Պաքուն մտահոգուած է - կարո՞ղ է Վրաստանից դուրս բերուող ուսական զինքի մի մասը տեղափոխուի Ղարաբաղ:

Նախագահ Ալիբեի աշխատակազմի ղեկավար Նուզլուզ Մամետովը «Ալթալախ»-ին ասել է, որ Մոսկուայի եւ Պաքուի միջեւ առկա խնդիրները պատճառը Ազրպէյճանից չէ կրկնելով Փուլիբի «Ռուսաստանը պէտք է հրաժարուի կայսերապատանական յաւակնութիւններից» արտայայտութիւնը: «Վրաստանից ուսական զինքի Հայաստան տեղափոխումը հարուածի տակ է դնում տարածաշրջանի կայունութիւնը: Հայաստանում առանց այն էլ շատ զէնք կայ: Ռուսաստանը մի բան է ասում, բայց անում հակառակը: Մենք ուզում ենք բարիդրացիական յարաբերութիւններ ունենալ հարեւանների հետ, բայց շատ բան մեզանից չի կախուած», ասել է Մամետովը:

Ազրպէյճանի պաշտպանութեան նախարար Սաֆար Ալիբեը Վրաստանից ուսական զինքերի Հայաստան տեղափոխումը ուղղակի սպառնալիք է համարում Ազրպէյճանի համար: Տուշանպէնում ԱՊՀի երկրների պաշտպանութեան նախարարների հանդիպման ժամանակ Ալիբեը մէկ անգամ եւս յիշեցրել է, թէ Ռուսաստանը խախտում է Եւրոպայում սովորական սպառալիւնութիւնների վերաբերեալ պայմանագիրը: Տեղեկացնենք, որ շրջանում մարտական գրահամեքենաների համար Ռուսաստանի մասնաբաժինը 241 միւսոր է, եւ Գիւմրիի 102րդ խարխուտը կայ ընդամէնը 222 գրահամեքենայ: Ազրպէյճանական մամուլն ուղադրութեամբ հետեւում է աշխարհի տարբեր երկրներին խորհրդարաններում Հայոց Ցեղասպանութեան ճանաչմանն ուղղուած իրադարձութիւններին: Մասնաւորապէս մեր հարեւաններին գործացնում է ամերիկացիների կեցուածքը՝ 1992 թուականին ընդունուեց 907 բանաձեւը, հայերը գրաւեցին Ազրպէյճանի հինգերորդ մասը, մէկ միլիոն մարդ փախստական դարձաւ, ու փոխանակ Ազրպէյճանին օգնեն, օգնում են հայերին: Սա քիչ էր, հիմա էլ ցեղասպանութիւն են ճանաչում, որը չի եղել: «Ալթալախ» թերթը Նուզլուզ Մամետովին հարցնում է՝ ժամանակը չէ՞ եւ ԱՀԿի Մինսքի խմբում ամերիկեան եռանախագահողին փոխարինելու մէկ այլ երկրի պատուիրակով: «Դրա կարիքը չկայ: Մեղաւորը Միացեալ Նահանգների դիվանագիտական խումբը չէ: Միացեալ Նահանգների հայկական ջոկատն առաջին, բայց միեւնոյն է՝ շուտ թէ ոչ Միացեալ Նահանգների վարչակազմը Ազրպէյճանի նկատմամբ իր դիրքորոշումը փոխելու է: Չնայած մեր ջանքերին, 907 բանաձեւն ուժի մէջ է: Անկեղծ ասած, այդ բանաձեւը մեզ լաւ բան էլ է տալիս, յոյսներս մեզ վրայ ենք դնում: Տեսէք, Հայաստանը եւ Վրաստանը տարեկան շուրջ 100 միլիոն տոլար են ստանում, Ազրպէյճանը՝ ոչ մի կոպեկ, բայց մեր երկրում կեանքն աւելի բարձր է, քան Վրաստանում եւ Հայաստանում: Աշխարհը սկսել է հասկանալ, որ Ղարաբաղի հարցում մենք ազնիւ ենք»:

Հայաստանի ներքաղաքական վերջին իրադարձութիւններին՝ նախագահ Քոչարեանի յանկարծակի Եւրոպա մեկնելուն, Աշոտ Մանուչարեանի «զգայացուցնող քաղաքականութիւն», Արկաղի վարդաբեանի իրաւափոխութեան մտորումներին, ազրպէյճանական մամուլը զրեթէ չի անդրադառնում, ի տարբերութիւն ուսական, որի վերջին մի քանի հրապարակումները չեն կարող գերադասել հանրապետական Մանուչարեանին եւ վարդաբեանին: Եւ եթէ նկատի առնենք, որ Ա. Մանուչարեանի վերլուծութիւնները կոպիլ ծրագրի «բարեփոխում» տարբերակներին են վերաբերում՝ Հայաստանի եւ Ազրպէյճանի տարածքային փոխանակութեանը, ապա անհասկանալի է Պաքուի լուրջութիւնը: Ազրպէյճանում նոր թափ է հարկուում հակաիրանական ջղաջարութեան: Թեհրանը հերթական անգամ յետաձգեց Հ. Ալիբեի իրան այցելութիւնը, ու եթէ Պաքուի իշխանութիւնները չարունակեն իրանի հիւսիսային շրջաններին յաւակնել, ապա ազրպէյճանա-իրանական յարաբերութիւնները լարուածութեան նոր փուլ կը թեւակոխեն: Պաքուն անցկացուած վերջին հարցումներով ազրպէյճանացիների 63 տոկոսը պաշտպանում է «Հիւսիսային եւ Հարաւային Ազրպէյճանների վերամիաւորումը»:

«Նեղալիսիմայա Կազեթ»-ի հարցող մամը՝ շատ իրանցիներ կարծում են, թէ Հ. Ալիբեը դեռ 60-70ական թուականներին, երբ խորհրդային Պետական անցումը անհաջիւն էր, Հարաւային Ազրպէյճանը Ազրպէյճանի խորհրդային Հանրապետութեան միացնելու աշխուժ գաղափարախօսներից էր եւ այսօր էլ նոյն նպատակն է փորձում իրականութիւն դարձնել, այս անգամ թուրքի եւ Միացեալ Նահանգների ժամդրականութեամբ: Ազրպէյճանի Ընկերավար - Ժողովրդավարական Գեմիկրատական կուսակցութեան համանախագահ Չ. Ալիբեյանը կարծում է, թէ «երկու Ազրպէյճանների միաւորումը պէտք է տեղի ունենայ երկու Գեմիկրատային օրինակով»: Իսկ դրա համար, ըստ Ալիբեյանի, նախահրաժեշտ է Ազրպէյճանում կեանքի պայմանները բարելաւել այն աստիճանի, «որ Հարաւային Ազրպէյճանի ընկերները ցանկանան միաւորուել Ազրպէյճանին»:

Հետաքրքրական է այս տրամաբանութեամբ են փորձում ազրպէյճանցիները լուծել նաեւ Լեռնային Ղարաբաղի ու յարակից հայկական շրջանների՝ կրկին Ազրպէյճանի բունակցելու հարցը:

Թ. Հ.

## ԿԱՊԱՆԻ ՄԷՋ ԿԸ ԿԱՌՈՒՑՈՒԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՑ ԵԿԵՂԵՑԻՆ

Չորս տարի առաջ սկսու կապանի Ս. Մեսրոպ Մաշտոց եկեղեցու շինարարութիւնը կարգ մը կազմակերպութիւններու եւ բնակչութեան հանդիպմանով միջոցներով: Սակայն ատեն մը ետք նիւթական պատճառներով աշխատանքները դադրեցան եւ վերսկսան այս Սեպտեմբերին:

Լուսինախանական հաշուարկներու, եկեղեցու կառուցումը աւարտելու համար անհրաժեշտ է 81 միլիոն դրամ: Շինարարներուն համաձայն, աշխատանքները պիտի աւարտին 2001 թուականի

Յուլիսին՝ մինչեւ քրիստոնէութեան ընդունման 1700ամեակի տօնակատարութիւններուն:

Եկեղեցու երեսպատման քարը կը բերուի Վահանավանքի շրջանէն: Մարմարախան - կրանիթատիպ այդ քարը վարդագոյն է եւ բնական նախազարդեր ունի: Այդ քարով 10րդ դարու կառուցւած է նաեւ Վահանավանքը:

Կապանի մէջ կառուցուող այս միակ եկեղեցին գմբէթին հետ պիտի ունենայ 23,5 մետր բարձրութիւն:

## ՍԵՒԱՆԻ ԽՆԱՅՈՒԱԾ 12 ՄԻԼԻՈՆ ԽՈՐԱՆԱՐԴ ՄԵԹՐ ԶՈՒՐԸ՝ ՈՒՈԳՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ

31 Հոկտեմբերէն սկսեալ բացուեցաւ Սեւան - Հրազդան ոռոգման համակարգի փակ աղուները, ուրկէ Արարատի, Արմաւիրի եւ Արագածոտնի համայնքներուն 33 հազար հեկտար աշնանացանի դաշտեր եւ 23 հազար 482 հեկտար խաղողի եւ պտղատու այգիներ պիտի ուղղուի Սեւանայ լիճի խնայուած 12 միլիոն խորանարդ մետր ջրովը:

Ինչպէս հարկուած է նախապէս, Հայաստանի կառավարութեան որոշումով այս տարի նախատեսուած էր ոռոգման նպատակով Սեւանայ լիճէն օգտագործել 190 միլիոն խորանարդ մետր ջրովը, որուն 20 միլիոնը՝ արտակարգ իրավիճակներու համար մինչեւ այսօր օգտագործուած է 178 միլիոն խորանարդ մետր ջրով:

վարչութեան պետ Ռազմիկ Գրիգորեան ըսաւ, թէ վերջին օրերուն Հայաստանի մէջ տեղացած անձրեւները բաւարար չեղան մեղմացնելու երաշտի եւ ջրի պակասին հետեւանքները:

«Սեւանայ լիճէն» ջրով պիտի տրուի վերոյիշեալ համայնքներուն ջրով սպառողներու ընկերութիւններուն կողմէ ներկայացուած դիմումներուն համաձայն», աւելցուց Ռ. Գրիգորեան:

Վարչութեան պետ Ռազմիկ Գրիգորեան ըսաւ, թէ վերջին օրերուն Հայաստանի մէջ տեղացած անձրեւները բաւարար չեղան մեղմացնելու երաշտի եւ ջրի պակասին հետեւանքները:

**ԿՈՒՉՈՒԻ**

- Կանոնաց հազուստի գործատեղի մը կարիք ունի վարպետ մտնելիս ծր: Եեռ. 01-249027:

**ԾԱԽՈՒ ՅԱՐԿԱԲԱԺԻՆ**

- Ամանոսի շրջանի մէջ, 2 մնջատեցեակ եւ հիւրասենեակ, օտուած էր ընտիրոպով, հեռաձայնի գծով: Դիմել հեռ. 03-885123:

**STUDIO Lantern**

- Կը ստանձնէ ուրախ առիթներու video ցկարահանումներ

Եեռ. 01-266866 ԵՒ 03-695399

**JUMBO TRAVEL**  
(ԳՆՏՈՅԵԱՆ ԵՂԱՐԷ)



- ՕԳՆԱՒԱՅԻՆ ՏՈՄՏԵՐ
- ԼՊՐԱՆՔԻ ՓՈՒՆԱՎՐՈՒԹԻՒՆ
- ԽՄԱՒԱՅԻՆ ՇՐՋԱՊՏՈՅՆԵՐ
- ՅԱՐՄԱՐԱԳՈՅՆ ԳԻՆԵՐ

**Պուրճ Համու, «Արմենիա» պողոտայ, Ետոյեան շէնք, հեռ. 01-266408, 01-267753, Cel. 03-738232 FAX. 01-266408 ՊԵՐՈՒԹ- ԼԻՔԱՆԱ**

«Ազգ»

## ՊԵԹՐՈՒՐԿԻՆՆ ՈՐՊԵՍ ՅՈՒՍԱՆ ՅԵՆՄԱՆ ԿԵՏ

Քարը մեր ազգային հարստութիւնն է, ինչպէս, ասեմք, Սէոուական Արարիոյ Համար քարուղն է, Ֆինլանդիայի համար՝ անտուր, Հարաւային Ամերիկայի՝ աղաւանդը եւ այլն: Ներկայիս փոքրիկ Հայաստանի տարածքում յայտնաբերուած է քարանիւթերի աւելի քան 650 հանքավայր: Դա, յիշուի, պատկանելի ցուցանիշ է, յատկապէս եթէ նկատի ունենանք նաեւ հետեւեալ փաստը. քարանիւթերի պաշարներով եւ նրանց որակական առանձնայատկութիւններով Հայաստանը առանձնակի տեղ է զբաղեցնում ոչ միայն շրջանում, այլեւ՝ ամբողջ աշխարհում: Եւ ամենեւին էլ պատահական չէ, որ քարաշխարհի մասնագէտները շրջանում ծնունդ է առել այսպիսի մի արտայայտութիւն. «Աշխարհում չկայ այնպիսի քար, որ Հայաստանում չլինի, բայց Հայաստանում կայ քար, որպիսին այլ վայրերում չես գտնի»: Յիրաւի, մեր լեռնաշխարհում, որը բերեմն անուանում են բնական քարերի բաց թանգարան, կարելի է գտնել երկրաբանական համարեա բոլոր ժամանակաշրջանների գոյացումները:

Ոսելով քարի՝ որպէս ազգային հարստութեան, կարելիութեան մասին, չենք շօշափի նրա կիրառութեան աւանդական եղանակները (ասեմք, որպէս շինանիւթ), ուղղութիւնները, ծաւալները, այլ կը ներկայացնենք տնտեսական մեծ կարեւորութեան մէկ ուղի՝ հիմնախնդիր, այն, որ մեր քարերն ու քարանիւթերը հիանալի ճամբ են հանդիսանում նաեւ պիթրուրիկայի (քարածուրման արտադրութեան) համար: «Պիթրուրիկա» բառը հինգ նշանակում է «քարածուրմ» («պետրոս» հին յունարէնում՝ նշանակում էր քար), ինչպէս, ասեմք, «Ալթալախ»-ում մետաղաձուլում:

Պիթրուրիկայի շնորհիւ բնական քարանիւթերն ուղղակի «կերպարանափոխում» են եւ ձեռք բերում որակական նոր, հրաշալի յատկանիշներ, որոնց նկատմամբ «պահանջարկը» անչափ մեծ է տնտեսութեան համար եւ բոլոր պոլիտեխնիկայի Գիտական բազմաթիւ հետազոտութիւններով վարուց է ապացուցուած, որ, օրինակ, Հայաստանի պիտուրիկայի կարելի է արտադրել բարձր զարդացած տնտեսութեան համար անչափ կարելու աւելի քան 110 տեսակի նիւթեր, որոնք, ի դէպ, հօր խորհրդային Միութիւնը ներկրում էր արտասահմանից:

Դեռեւ 1930ականներին այն ժամանակ արդէն անուանի գիտնականներ Ֆլորինսքին, Եուտիցքին, Բիթլայկորոտսքին եւ ուրիշներ գտնում էին, որ Հայաստանում պէտք է հիմնել քարածուրման արտադրութիւն, քանզի, ըստ նրանց գիտատեղանիքի, Հայաստանի քարանիւթերն օժտուած են առաւել բարձր որակական յատկանիշներով: Եւ, իրօք, նոյն 30ականներին արուած մի շարք հետազոտութիւնները ցոյց էին տուել, որ, օրինակ, քարանիւթի ձուլումը առաւել թանկ է իրերի ամրութիւնը կազմում էր 6000 քլ.սմ. 2 (այն տարիներին Ֆրանսայում եւ Գերմանիայում արդէն գործում էին պագալիթ) համար արտադրութիւններ), այն դէպքում, երբ հայկական հայած պագալիթի ստացումը իրերի ամրութեան ցուցանիշն էր 8460 քլ.սմ. 2: Յիրաւի յուսադրող ցուցանիշ էր:

Քարածուրմ նիւթերը ստացում են հեղուկահոսուն քարահալուցից: Դա նարարութիւն է տալիս կաղապարման եղանակով պատրաստել ցանկացած ձեւի եւ քաշի (մի քանի կրամէ մինչեւ մէկ թոն եւ աւելի) արտադրատեսակներ: Անչափ լայն են քարածուրմ նիւթերի կիրառութեան ոլորտները՝ արդիւնաբերական, գիւղական եւ բնակարանային շինարարութիւն, մեքենաշինութիւն եւ սարքաշինութիւն (արդիւնաբերութեան այս ճիւղերի անընդհատ զարգացման համար անհրաժեշտ նոր նիւթեր առաւելապէս կարելի է ստանալ քարածուրման եղանակով, եւ այդ նիւթերը կ'ունենան փոքր տեսակարար կշիռ, օժտուած կը լինեն գտիչ եւ կարելի յատկութիւններով, եւ այդ յատկութիւնները կարող են պահպանուել գերբարձր՝ մինչեւ +800 աստիճան սեյմուս ջերմային պայմաններում), ինքնախորանշինութիւն, նաւաշինութիւն եւ կրկին մեքենաշինութիւն (այս բնագաւառների համար պագալիթից կարելի է պատրաստել իրանների գերթիթեւ կառուցուածքներ, որոնք կ'ունենան նաեւ ձայնաշերմամեկուսիչ բարձր յատկութիւններ:

Մեր երկրի բնական քարանիւթերի «կերպարանափոխումներ» եւ դրանց աննախադէպ արդիւնքների մասին կարելի է իսուել «մանուսկրիցով», ընդ որում՝ գիտականօրէն հիմնաւորուած, հետազոտութիւններով հաստատուած բազմաթիւ փաստերով: Ընդգծենք միայն մէկ օրինակ, որն ունի ուղղաւարական որոշակի ուղղուածութիւն. քարածուրմ նիւթերը մետաղների համեմատութեամբ ունեն մի շարք առաւելութիւններ՝ ղեմակալուածութիւն թմրիական ներգործութեան նկատմամբ, տիկնթրրիութիւն, մեքենայակալումը արեւմտեան նիւթերի Պէտք է, որ անչափ հրապուրիչ լինի աւելի տարիներ: Պէտք է, որ անչափ հրապուրիչ լինի քարածուրմ նիւթերի նման առանձնայատկութիւնը, չէ՞ որ միայն թիթուների ազդեցութեան հետեւանքով աշխարհում ամէն տարի շարքից դուրս են գալիս միլիոնաւոր թիթուներով սեւ մետաղներ, եւ դա այն դէպքում, երբ գնալով նուազում են մետաղների բնական պաշարները, բարձրանում են զբանջ գները:

Եւ յետոյ, քարածուրմային արտադրութեան համար հոսեց կարող են լինել ոչ միայն քարերը, այլեւ հանքաքարային արտադրութեան թափօնները, «պոչանքը», լեռնային «ոչ արժէքաւոր» ապարները, խարանները, որոնց պաշարները մեր երկրում, կարելի է ասել, անսպաս են:

Ակամայ հարց է ծագում՝ հապա ինչո՞ւ քարերի երկրի Հայաստանում չկայ քարածուրման արտադրութիւն, էլ չենք ասում՝ քարածուրման հօր ոլորտ:

Այդ մասին առանձին:

ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ԿԱՐԵՐԻ ԶԱՐԿՆԵՐԸ

«Երկիր»

# Միջազգային Քաղաքական

## ՄԻՋԻՆ ԱՐԵՒԵԼՔԸ՝ ԶՐՀԵՂԵՂԷՆ ԵՏՔ

Իսրայելի եւ Պաղեստինի քաղաքական իրավիճակը ներկայիս կ'ուզուի դիպի ծաւալուն ենթատազնապային հակամարտութիւն՝ Այսրոյորդանանի եւ կազմի մէջ:

Բռնութիւններու ծաւալումը հաւանական է, որովհետեւ ոչ զանոնք ճնշելու քաղաքական կամք կայ, եւ ոչ ալ բաւարար բռնութիւն, որպէսզի ստիպէ հակամարտ կողմերէն մէկը անձնատուր ըլլալ:

Ռապիւի եւ Փերէսի խաղաղութեան նախաձեռնութիւններու ժառանգորդ, Իսրայելի վարչապետ էհուտ Պարաք կողմնակցած է հակակազմը: Պաղեստինեան պառակտուած դեկլարութիւնը երկու նպատակ կը հետապնէ՝ հեռացնել Իսրայելը Միացեալ Նահանգներէն եւ հրաշքներ արժանանանալու թիւեր արարական աշխարհին մէջ: 1973ին չենք վերադարձած, այլ՝ 1980ականի ինթիֆա տակին:

Իսրայելի մէջ Պարաքի ընկերակցական կառավարութիւնը փուլ եկած է: Ստեղծուած է այն կամուրջը, թէ Պաղեստինի ազգային իշխանութիւններու հետ խաղաղութեան յանգիլը անկարելի է: Իսրայելացիները աւելի տրամադիր են պաղեստինցիները ճնշելու, քան անոնց ձգտումներուն համաձայնելու:

Յատկանշական իրողութիւն է, որ Պարաք ստիպուած կը մօտենայ Արիէլ Շարոնին՝ ազգային միութեան կառավարութիւն հիմնելու համար: Իսրայելի մէջ նմանօրինակ կառավարութիւններ կազմուած են չափազանց

վտանգաւոր կացութիւններու շրջանին, երբ քաղաքական ընթացիկ վէճերը դադարած են: Ռապիւի - Փերէս հեռանկարներուն հակադրուող Շարոնին մօտենալով՝ Պարաք կ'ընդունի, որ իր ընտրութեանն էտք 18 ամիս այլեւս չի կրնար կառավարել երկիրը:

Ազգային միութեան կառավարութիւն կազմելը կը նշանակէ Շարոնին յանձնել պաղեստինցիներուն հետ յարաբերութիւնները: Տարօրինակ կերպով ասիկա հաւանաբար տազնապը մեղմացնելու միակ յոյսը կրնայ նկատուիլ: Ինչպէս Ռիչըրտ Նիքսըն կրցաւ Ձիւնաստանի առջեւ դուները բանալ, նոյնպէս Շարոն հաւանաբար պիտի կարենայ համաձայնիլ պաղեստինցիներուն հետ:

Սակայն Շարոնը Նիքսըն չէ: Աւելի քան երեք Շարոն եւ Լիքուտ կուսակցութիւնը համոզուած են, որ պաղեստինցիներուն հետ իրական համաձայնութիւն մը գոյացնելու անկարելի է, բացի եթէ պաղեստինցիները արժատականօրէն փոխեն քաղաքական իրենց վերաբերմունքը: Նոյնքան կարեւոր է, որ Լիքուտի քաղաքական անձնակազմը իրենց պատրաստ են պահել քաղաքական իրենց այս ուղիւթիւնը մինչեւ որ վերոնշեալ փոփոխութիւնը կատարուի: Այս իմաստով Պարաք շատ քիչ կարելիութիւններ ունի: Ան եթէ չկարենայ նոր կառավարութիւնը ձեւաւորել, ապա ստիպուած պիտի յայտարարէ նոր ընտրութիւններ, որոնց մէջ իր յաղթանակը քիչ հաւանական է: Ամէն

պարագայի Լիքուտ կրկին իր ձեռքը պիտի առնէ հակակազմը: Այն մարդը, որ պաղեստինցիները կը նկատէին տազնապը հրահրող՝ կամ պիտի դեկլարէ եւ կամ հիմնական դիրք պիտի զբաղէ կառավարութեան մէջ:

Սակայն Իսրայելի կառավարութեան փոփոխութիւնը ներկայ պայմաններուն մէջ շատ քիչ տարբերութիւն պիտի ընէ պաղեստինցիներուն համար: Շատ քիչեր կը խօսին Օսլոյի համաձայնութեան կամ խաղաղութեան գործընթացին մասին: Բացի Արաֆատէն, ոչ ոք չի ցուցնէ պաղեստինցի դեկլարէ Եասէր Արաֆատ ինչ կը մտածէ՝ կամ կ'ուզէ: Սակայն յատկապէս, որ ան որեւէ այլ կարելիութիւն չունի, բացի ըմբոստութեան բանբերը ըլլալու:

Նախքան Քէմփ Տէյվիտի բանակցութիւնները՝ պաղեստինցիները կրնային իրենք զիրենք կատակով համոզել, որ յարմար ժամանակին պիտի ստեղծուի պաղեստինեան պետութիւնը եւ Երուսաղէմի հարցը պիտի լուծուի: Քէմփ Տէյվիտէն ետք ոչ մէկ պաղեստինցի կը հաւատայ ստոր:

Ներկայիս պաղեստինցիները բաժնուած են երկու մասի. անոնք, որոնք կ'ուզեն ծաւալել բռնութիւնները, եւ անոնք, որոնք կ'ուզեն բռնութիւններուն աւարտը: Յստակ չէ, թէ վերջին խումը մեծամասնութիւն կը կազմէ՝ եւ հետեւաբար յատկապէս Արաֆատ կրնայ կառչած մնալ իր սկզբունքներուն: Պաղեստինեան ազգային իշխանութիւնը այն դիրքին մէջ

է, որ կարենայ իրագոյն գործակցել Իսրայելացիներուն հետ:

Ներկայիս պաղեստինցիները պիտի փորձեն երկու նպատակներու հասնիլ՝ պաղեստինցիները վերականգնելու համար ամբողջական կարեկցանքը, ապա՝ ամբերիկեան վարչակազմին: Պետականութիւն ստեղծելու համար միակ յոյսը Մ. Նահանգներու եւ Իսրայելի միջեւ տարածութիւն ստեղծելն է:

Շարոն ծանօթ է ամերիկեան զպայումները վերականգնելու իր կարողութեամբ: Պատկերասփոխուած այն տեսարաններուն համար, որ Իսրայելացիները իրենք կը բանալ պաղեստինցի երեխաներու վրայ, Շարոն կը ներկայանայ առանց չքմեղանքի: Այս երկուստեք կրնայ վնաս պատճառել Ուաշինգթոնի հետ Իսրայելի կապերուն:

Միւս նպատակն է հակաիսրայելեան զպայումները վերականգնելու անցնել զբացի արար երկիրներուն մէջ: Պաղեստինցի դեկլարանքը կը նշեն, թէ մինչեւ այն ատեն, որ Իսրայելը ռազմականօրէն ապահով կը զգայ, պիտի չարտահայտէ պաղեստինցիներուն հետ բիրտ վարուելի: Պաղեստինցիներուն համար լաւագոյն յոյսը Եգիպտոսի եւ Սուրիոյ միջեւ 1973ի օրերու հակաիսրայելեան դիմակցութեան վերստեղծումն է:

Պաղեստինցիներուն այս դիրքորոշումը կը ստեղծէ առեղծուած մը: Մէկ կողմէ պաղեստինցի դեկլարանքը պիտի փորձեն ճեղք յառաջացնել Իս-

րայելի եւ Մ. Նահանգներու միջեւ, միւս կողմէ՝ անոնք պիտի փորձեն նեցուկ կանգնել հակամերիկեան ուժերու, որպէսզի արար երկիրներուն ստիպեն, որ իրենց քաղաքականութիւնը փոխեն: Պաղեստինեան դեկլարութիւնը երկու ուղիւթներով կը յառաջանայ եւ անհաւանական է, որ շուտով արդիւնքի հասնիլ:

Ամէնէն հաւանականը այն է, որ որեւէ արդիւնք ձեռք չընտրուի: Բռնութիւնները պիտի շարունակուին: Իսրայել պիտի դուրս 1980ականին ինթիֆա տակին զէմ գործադրած միջոցառումներու ընտրանքին առջեւ՝ չըջապատել Այսրոյորդանանը եւ կազան, արգիլել պաղեստինցի աշխատակարարներուն մուտքը Իսրայել, կեղծնել զէպի այդ շրջաններ ներածումները եւ պաղեստինցիները ծուռնիլ լրերի տնտեսապէս: Այս երկու գործընթացը կրնայ պաղեստինցիներուն նկատմամբ ամերիկացիներուն կարեկցանքը եւ շրջանին մէջ իսլամական արմատականութեան ազդեցութիւնը աւելցնել եւ միտամանակ վնաս պատճառել Իսրայելի տնտեսութեան:

Յուլիոսի Քէմփ Տէյվիտի մէջ հարցին մնայուն լուծման համար սկսած փորձերը պիտի շարունակուին անորոշ կերպով: Արեւմտեան թերթերու առաջին էջերուն մէջ պիտի չնշուին բռնութիւնները: Սակայն խորքին մէջ ստեղծուած է ուժեղանութիւն մը, որ պիտի մաշկեցնէ շրջանին հիմքերը:

Համադրաբար՝  
«ՍԹՐԱԹՅՈՐ»-ԷՆ

# ՊԱՂԵՍՏԻՆԵԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ ՏԱՐԱԾՈՒՄԸ

Արարներ եւ կարգ մը իսրայելացիներ սկսած են մտածել, որ Միջին Արեւելքը կը գտնուի մեծ տագնապի մը սեմին: 20 Հոկտեմբերին գրաւեալ հողերուն մէջ «վախճանութիւնը դադարեցնելու» համար Պրի Քիւնթընի տուած պայմանաժամը վերջ գտաւ կրակներու մէջ: 22 Հոկտեմբերին Եգիպտոսի մէջ հաւաքուած արար դեկլարանքը խիստ ոճով յայտարարութիւն մը հրատարակեցին, որ ոչ իրենց ժողովուրդներուն ընդզուգումը մեղմացուց, ոչ ալ՝ պաղեստինցիներուն զայրոյթը: Իսրայելի բանակը կ'ըսէ, թէ ինք Այսրոյորդանանի եւ կազայի մէջ կը փորձէ թիրեւս «տարածել մը ի վեր ընթացք առած տագնապը» մեղմացնել: Շրջանային պատերազմի մը վտանգը աւելի մեծ է, քան երբեք, զիտեւ կու տայ բանբեր մը:

Պաղեստինեան նոր ինթիֆա տան արագօրէն լուրջ հակապաղեստինական յետաշրջումի ընդթ մը կը ստանայ: Առաջին երեք շաբթուան բախումներուն ընթացքին զհուկեցան 125 եւ վիրատուրեցան 5000 պաղեստինցիներ, որ կը գերազանցէ 1987 Ինթիֆա տան սկսած բռն ինթիֆա տակին առաջին երեք ամսուան պաղեստինեան վնասները:

### ԶԳՈՒՇԱԲՈՐ ԺՈՂՈՎԱԿԱՆՆԵՐԸ

Այս դէպքերէն ետք արարական գերաստիճանը, որ առաջինն էր չորս տարուան մէջ, թուեցաւ ըլլալ ետարձ մը զէպի այնպիսի ժամանակ, երբ տագնապի մը սեմին գտնուելով՝ օրուան պահանջը «Արդար եւ լայնիմաստ խաղաղութեան» մասին խօսիլն էր: Գերաստիճանին հրապարակած յայտարարութիւնը դատապարտեց գրաւեալ շրջաններուն մէջ իսրայելեան «բարբարոսութիւնները» եւ միջազգային ատեսանի մը կազմութիւնը պահանջեց իսրայելացի զօրավարները իրեն «պատերազմի ոճրագործները» դատապարտելու: Գերաստիճանը մէկ միջիւստ տողար յատկացուց պաղեստինցիներուն համար եւ ուրտեց, որ մնայուն խաղաղութիւն պիտի չհաստատուի, մինչեւ որ «Արեւելեան Երուսաղէմը վերադարձուի պաղեստինեան գերիշխանութեան»:

Սակայն յայտարարութեան մէջ ակնարկութիւն չկար առնուելիք որեւէ քայլի մասին: Հոն կը նշուէր, թէ ոչ մէկ դիւանագիտական եւ տնտեսական նոր կապ պիտի հաստատուէր Իսրայելի եւ արարական երկիրներուն միջեւ:

Իսկ արդէն գոյութիւն ունեցող կապերուն ճակատագիրը որոշելը, ներառեալ՝ Եգիպտոսի եւ Յորդանանի Իսրայելի հետ խաղաղութեան համաձայնագիրները, ձգուեցան խնդրոյ առարկայ երկիրներուն դատողութեան: Պաղեստինը առանձին չէր, որ դատապարտեց այլ «հնազանդութիւնը»: Լիպիա, իրեն բողոքի արտայայտութիւն, լեքս ժողովը եւ ամրոյղ շրջանի տարածքին ուսանողներ բողոքի ցոյցերով պահանջեցին աւելի կարծի քայլերու որդեգրումը:

Եգիպտոսի նախագահ Հիւսնի Մուսարաք իր վարկը վտանգելով պնդեց այն տեսակէտին վրայ, թէ աւելի կարծի քայլերը կրնան հակառակ արդիւնքը տալ: Մուսարաքի համաձայն, Իսրայել միայն ինք կրնայ վերջ մը դնել վախճանութիւններուն՝ ջնջելով պաղեստինեան շրջաններուն շրջափակումը եւ վերադառնալով բանակցութիւններու սեպուս, հետեւաբար շրջանին մէջ Եգիպտոսի եւ Յորդանանի դեպքաններուն ներկայութիւնը կրնայ նպաստել հարցին լուծման: «Մենք պատասխան

նատու միջոցառումներ կը սպասենք միւս կողմէն», յայտարարեց Մուսարաք գերաստիճանի աւարտին: Սակայն էհուտ Պարաք աւելի հաւատարիմ դուրս եկաւ իրեն քուէարկողներուն: Դատապարտելով գերաստիճանին «սպառնական ոճը»՝ Իսրայելի վարչապետը միակողմանի դադար մը յայտարարեց խաղաղութեան գործընթացին: Հաւանաբար, իրեն հետեւեալը, թուեցաւ եւ ապա Մարոք խզեցին Իսրայելի հետ իրենց կապերը:

Պարաք ըստ երեւոյթին մտադիր է «միակողմանի բաժանում» կատարել երկու ժողովուրդներուն միջեւ, որ կը նշանակէ, թէ Իսրայել մտադիր է գրաւել պաղեստինեան շրջանները եւ անոնց կցել հրէական բնակեցման վայրերու հիմնական կեդրոնները, յատկապէս՝ Երուսաղէմի շուրջը գտնուող բնակեցման վայրերը: Ասիկա, ըստ արարներուն, կը նշանակէ, որ Իսրայել կ'ուզէ գէնքի ուժով առնել այն, ինչ որ Քէմփ Տէյվիտի ընթացքին բանակցութեան միջոցով չկրցաւ ձեռք ձգել:

Այս ձեւի որեւէ դատաւարում կը հանդիպի ինթիֆա տակին դեկլարութեան ընդդիմութեան, կը մղուի Արաֆատի «Ֆաթհ» շարժումի քսակին՝ անդուրեւորուելու կողմէ: անիկա նաեւ կը վայելէ Համասի նեցուկը: Ինթիֆա տակին նպատակը, որ կը յիշուի անոր հրատարակած բոլոր կոչերուն մէջ, ապագայ բանակցութիւններուն հիմքը փոխելն է: Անոնք կ'ուզեն, որ 1993ի Օսլոյի համաձայնութեան մէջ ամերիկացի միջնորդներուն պաշտպանած մօտեցումին վերջ մը դրուի եւ փոփոխեցնել կը պահանջեն վերադառնալ զէպի ՄԱԿի Ապահովութեան Խորհուրդի սկզբնական որոշումները, որոնք Իսրայելին կը պահանջեն քաշուիլ գրաւեալ հողերէն:

Ուրիշ արարներ եւս մտահոգ են Իսրայելի միակողմանի որոշումներով: Եթէ այսպէս շարունակուին, դիտել տուաւ եգիպտացի դիւանագէտ մը, «այդ մէկը կը նշանակէ դիւանագիտական բոլոր կապերու տե ֆաթթօ խզումը»: Այդ մէկը կրնայ նաեւ յանգիլ դինեալ գործողութիւններու:

Ասիկա պատերազմ չի նշանակուի. Իսրայելի գինուորակաւ բացարձակ գերակայութիւնը կը բացառէ այլ կարելիութիւնը:

Սակայն ճամբէն ժամանակներէն աւելի Իսրայելի համար հիմա է առիթը հարուածելու», կը նշէ եգիպտացի վեթերան վերլուծող մը: Պատրուակը կրնայ Յորդանանի սահմանին վրայ իրաքեան ուժերու կուտակումը ըլլալ, իսկ թիրախը՝ Սուրիոյ նոր դեկլարացի: Այդ պիտի քայլի մը նպատակը, ըստ վերլուծողին, կրնայ ըլլալ Իսրայելի «արգելափակել կարողանալութեան» հանդէպ հաւատքի վերականգնումը, ինչպէս նաեւ անիկա պատգամ մը կը փոխանցէ արարներուն, որպէսզի ստիպեն պաղեստինցիներուն՝ նուազեցնել իրենց պահանջները: «Իսրայել լաւ դիտել - աւելցուց ան», թէ արար վարչակարգերը մտահոգուը Երուսաղէմը չէ, ոչ ալ Պաղեստինը, այլ՝ իրենց գոյատեւումը: «ՏԻ ԷՔՈՆՈՍՏՍՈՒՍ»

# ԱՐԱՔԵՒԻՍՐԱՅԵԼԵԱՆ ԲԱԽՈՒՄՆԵՐԸ ԿԸ ՏԱՐԱԾՈՒԻՆ ՆԱԵՒ ԻՆԹԵՐՆԵՐԻ ՎՐԱՅ

Հըզպալլայի ուկալայթը վերջերս ստացած էր տարօրինակ նոր կերպարանք մը: Եթէ Հըզպալլայի հիմնադրող փորձէր մուսուլման գործը, ձեռք բերելու կը յայտնուէր Իսրայելի դրօշակը, երբայերէնով գրութիւնները եւ Իսրայելի ազգային քայլերը: Համակարգի խափանարներու (հիֆթր) իսրայելեան բանակը, որուն գինուորակը կը հազարաւոր երիտասարդ ստեղծարարներու կազմակերպութեան ձեռքով մը գործեցին Հըզպալլայի եւ արարական այլ սալթերու վրայ, մինչ բռնութիւնները կը ցնցէին շրջանը:

Անցեալ շաբաթ արարները, Միացեալ Նահանգներու մէջ պաղեստինաւանտ սալթըրը գինուորակներու գլխավորութեամբ հակալարձակումի դիմեցին: Համակարգուած այս հակալարձակումին թիրախ դարձան Իսրայելի բանակին, արտաքին գործերու նախարարութեան վարչապետին, խորհրդարանին եւ այլ ուկալայթերը:

Ասիկա սալթըր - տարածքին վրայ պատահած առաջին ամբողջական պատերազմն է, կ'ըսէ Իսրայելեան «Նեթվիլմը» ընկերութեան նախագահ Կիլար Ռապիւնովի:

Այս պատերազմը չի նմանիր միւսներուն, երբ մասնակց խափանարարները կը փորձեն մէկը միւսին սալթերու արելը: Իսրայելացի եւ արար հազարաւոր երիտասարդները նաեւ կը մասնակցին այս պատերազմին: Իւրաքանչիւր կողմ իր գինակիցներուն կը զըգէ հակառակորդին սալթերու հասցէները եւ զանոնք խափանելու միջոցները եւ ծրարները:

Իրեն համակարգչային իմաստով աշխարհի ամէնէն զարգացած ժողովուրդներէն մէկը՝ Իսրայելի առաւելութիւն ունի այս պատերազմին մէջ: Իսրայելի մէջ շուրջ 1,1 միլիոն ինթիֆա տակին իսրայելեան իրաւունքները կան (աւելի քան 22 արարական երկիրներ միասնաբար): Սալթերու միջոցով, որոնք կը աւելնայ խոցելի կը դարձնէ իսրայելեան կողմը:

Անցեալ շաբաթներուն Իսրայելի արտաքին գործերու նախարարութեան սալթըրը երկու օրուան համար անհասանելի դարձաւ, մինչ համակարգիչի մասնակցները կը փորձէին աւելի հզօր «պատենջներ» կառուցել պաշտպանելու համար զայն: Երեք օր յարձակումներու թիրախ դառնալէ ետք Իսրայելի բանակը յայտնեց, թէ ինք պիտի օգտագործէ ԷՅԹԻ Է.Է.Է. ինթիֆա տակին ցանցը, այն պարագային, որ անկարելի ըլլայ «Նեթվիլմը» միջոցով իր սալթերու հետ կապ հաստատել:

«Ասիկա ուղեղներու պատերազմ է, որովհետեւ մենք միշտ պիտի վերականգնենք այն ուղեղները, որոնք միջոցով յարձակողները կը փորձեն խափանել մեր սալթերուն մէջը», կ'ըսէ

Ռապիւնովի: Գիտնալէ ետք, թէ անոնք ինչ քրած են, մենք պէտք է յարմար «պատենջներ» կառուցենք պաշտպանուելու համար: Նոյնիսկ Լիքուտ կուսակցութեան սալթըր յարձակումի ենթարկուեցաւ: Անիկա «ուրակոճուեցաւ» հազարաւոր ի-մ-լ-լ-ի տակին միջոցով, որոնք կը պարտուեցան «Մանիթալներու», «Դոնսթըր կը սպասէ» եւ նմանօրինակ պատգամներ:

Արար խափանարարներ նաեւ թափանցեցին Իսրայելի խորհրդարանի՝ Քնեսեթի սալթեր մէջ եւ խափանեցին անոր թղթածրարները: Խորհրդարանի բանբերի մը համաձայն, յարձակումը հաւանաբար ստեղծուեցած է Ահտատական Արարիային:

Արարական եւ մասնաւորաբար Հըզպալլայի սալթերը վրայ Իսրայելացի խափանարարներու յարձակումները համեմատաբար մասնաւորաբար ստեղծուեցան: Հըզպալլայի սալթերը վրայ յարձակումները սկսան շուրջ երեք շաբաթ առաջ, իրանաւանտ սահմանի վրայ Հըզպալլայի գինեակներուն կողմէ Իսրայելացի երեք գինուորներու առեւանգումէն ետք:

«ԱԶԳԱԿ»-ի ՀԵՌԱԶԱՅՆԻ ԹԻՒՐԵՐԸ  
«ԱԶԳԱԿ»-ի հետ կապուելու համար հեռաձայնի հետեւեալ թիւերուն: 258526, 260145 եւ 241274:


al-mashrek INSURANCE & REINSURANCE S.A.L.  
Պուրճ Համուտի մասնաճիւղի հեռաձայնի թիւերն են.  
(01)258228 – (01)268808  
Fax: (01) 258223

ՀԱՄԱԿ ՍԱՄՈՒՆԵԱՆԻ ՀԱՍԵՆ  
HAMPIG SASSOUNIAN C- 88440  
CSP - L.A.C. D-5- 232 44750  
60-TH ST. WEST LANCASTER, CA, 93536  
USA





# Մ Ա Ր Չ Ա Կ Ա Ն ԱՇԽԱՐՀ



## ՖՈՒՐԳՈՒԻ ՖԵՏԵՐԱՍՈՆՆԻ ՆՐԱԿԵՐՈՎ

### ՄԵԾԱՐԱՆՔԻ ԵՐԵԿՈՅ Ի ՊԱՏԻ «ԱՍԻԱ - 2000» Ի ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉ ՅԱՆՉՆԱԽՈՒՄՔԻՆ

Երեկ երեկոյեան ժամը 8:00ին, «Պրիսթոն» պանդոկին մէջ տեղի ունեցաւ ընթրիքի երեկոյ մը, որ նաեւ եղաւ մեծարանքի երեկոյ՝ ի պատիւ «Ասիա - 2000» ի կազմակերպիչ յանձնախումբին: Երեկոն սրուած էր Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնին հրատեղով: Ներկայ էին ֆուտպոլի շքանակներին ներկայացուցիչներ եւ քաղաքական անձնատուրութիւններ: Յաջորդաբար խօսք առին մարմնակրթութեան նախկին նախարար Մոհամէտ Եուսէֆ Պայտուն, Լիբանանի Ռիմպիական Յանձնախումբի նախագահ Վոր. Սուհէյլ Սուրի, Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնի նախագահ Նեպի Ռայի, ֆետերասիոնի ընդհանուր քարտուղար Ռահիֆ Ալլամէ եւ մարմնակրթութեան նախարարութեան սնտօրէն Չէյա Նիսան: Անոնք բոլորն ալ վերաբերեալ մէջ գովեցին մրցաշարքին կազմակերպչութիւնը եւ հաստատեցին, որ այս մրցաշարքը Լիբանանի մէջ տեղի ունենալը երկրին ապահովեց մեծ վարկ: Բոլոր բանախօսները յաջողութեան մէջ գովեցին մրցաշարքին կազմակերպիչ յանձնախումբին յաջող եւ արդիւնաւետ աշխատանքը, իսկ յաջողութեան մէջ նաեւ տեսան Լիբանանի ֆուտպոլի ֆետերասիոնին բերած մեծ բաժնիւր եւ ներդրումը:

Վերջապէս, սրտի խօսք ուղղուեցաւ նաեւ հանրապետութեան նախագահ Վոր. Բիլի Լահուտի, որ ոչ միայն եղաւ մրցաշարքին թիւ մէկ համակիրը, այլեւ անոր անակարկի քանդակուն շնորհիւ է, որ մրցաշարքը առաջին անգամ ըլլալով տեղի ունեցաւ Լիբանանի մէջ:

## ՖՈՒՐԳՈՒԻ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄ

### Հ.Ս.Ը.Մ. - ԱԻԱ ԱԶԼԻ ԱԼԷՅ

Ֆուտպոլի բարեկամական մրցումի մը ընթացքին, Հ.Ս.Ը.Մ. Ներկայացուցչական կազմը, վաղը Շարաթօր, Պուրճ Նաբաթի քաղաքապետարանի դաշտին վրայ պիտի հիւրընկալէ Ախա ԱՀԻ ԱՀԻՅը: Մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 3:00ին:

● ԿԻՐԱԿԻ, ԾՆՈՅՄԵՐԵՐԻՆ, Հ.Ս.Ը.Մ. Ժուլիստներու եւ կրտսերներու ֆուտպոլի խումբերը Պրոֆի դաշտին վրայ պիտի կատարեն բարեկամական մրցումներ, նոյնիսկ Պրոֆի դէմ: Առաջին մրցումը տեղի պիտի ունենայ ժամը 8:00ին, իսկ երկրորդը՝ ժամը 10:00ին (առաւօտեան):

Անցեալ շաբաթավերջին, Ժուլիստները 3-0 արդիւնքով պարտութեան մատնած էին Նրժմէ Սահրան, իսկ կրտսերները՝ 4-2 արդիւնքով՝ Նրժմէն:

## ՊԱՍԲԵԹՊՈՒ

### Հ.Ս.Ը.Մ. - ՍԱԺԷՍ ԲԱՐԵԿԱՄԱԿԱՆ ՄՐՅՈՒՄՆԵՐ

Յաջողիկայ կիրակիօր, ԾՆՈՅՄԵՐԵՐԻՆ, Զապրի դաշտին վրայ տեղի կ'ունենան պասքեթպոլի բարեկամական երկու մրցումներ՝ Սաթհի եւ Հ.Ս.Ը.Մ. ի խումբերուն միջև:

Առաջինին, որ տեղի պիտի ունենայ երեկոյեան ժամը 7:00ին, Սաթհի աղջիկները կը մրցին Հ.Ս.Ը.Մ. ի աղջկանց դէմ, իսկ երկրորդին, որ տեղի պիտի ունենայ ժամը 9:00ին, Սաթհի սղաքը կը ճակատին Հ.Ս.Ը.Մ. ի սղոց դէմ:

● ԵՐԵԿ, Մըզհէրի «Ատու եւ Սելա թնճուկեան» դաշտին վրայ, Հ.Ս.Ը.Մ. պասքեթպոլի Պէյրուսի աղջկանց կազմը 64-53 արդիւնքով յաղթեց Բ. դասակարգի Թասատին: Այս մրցումը Հ.Ս.Ը.Մ. ի համար Բ. դասակարգի բարեկամական պատրաստութիւնն է:

## ԳԵՐՄԱՆԻԱ ՖՈՒՐԳՈՒԻ ԲԱՍԿԵՏԱՐԳ

### ՊԱՅԷՐՆ ՄԻԻՆԻՆ ԴՈՒՐՍ ՄՆԱՑ

Գերմանիոյ ֆուտպոլի բաժնի մրցաշարքի Բ. հանգրուանի մրցումներուն, ոչ արհեստավարժ Մակ-տեպուրի խումբը մեծ անակնկալ մը ստեղծեց, երբ մրցաշարքէն դուրս ձգեց երկրին ֆուտպոլի հսկաներէն՝ Պայէրն Միւնխիւրը:

Մակտեպուրի «աստղը» եղաւ բերդապահ Միրոսլաւ Տրեպլը, որ յաջողեցաւ գտնել Նոս Ժերմիսի եւ ձիովանի էլպէրի հարուածած փնուրիները: Մրցումին 120 վայրկեանները վերջ գտան 1-1 արդիւնքով եւ Մակտեպուրի փնուրիներով 4-2 յաղթական դուրս եկաւ:

Անակնկալ ստեղծեց նաեւ ոչ արհեստավարժ ալ կազմ մը՝ Քարլսրուհէ Էս. Սի., որ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Համպուրկը:

Բ. դասակարգին մաս կազմող Ուլմ, Հանովըր 96 եւ Պորուսիա Մէօնշտրէպուպի իրենց կարգին ստեղծեցին անակնկալներ, մրցաշարքէն դուրս ձգելով, յաջորդաբար՝ Բոնպուրս (2-0), Հանզա Ռոսթոքը (2-1) եւ Քալբերլատութընը (5-1), որոնք մաս կը կազմեն Ա. դասակարգին:

Պորուսիա Տորթմունտ 1-0 արդիւնքով պարտութեան մատնեց Վեհէն - Թաուսուսթալը (ոչ արհեստավարժ), Ֆրայպուրկ՝ Վերտըր Պրեմընը (1-0), իսկ Պայէր Լեւերքուզըն՝ Ալմանիա Աախընը (Բ. դասակարգ), 2-1 արդիւնքով:

## ԾԱՏՐԱԿ

### ՔՐԱՄՆԻՔ ՏԱՐԱՒ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՅԱՂԹԱՆԱԿԸ ԵՒ ԳԱՀԸՆԿԷՑ ԸՐԱՒ ԳԱՍՊԱՐՈՎԸ

Ճատրակի աշխարհի վերջին 15 տարիներու գահակալը՝ Կէրի Գասպարով, (որ 1985ին հանդիսացաւ աշխարհի ախոյեան) երէկ գահընկէց եղաւ, երբ Լոնտոնի մէջ Վլադիմիր Բրամնիքի դէմ «մրցաշարք» ի 15րդ հանդիպումին հաւասարութիւն մը արձանագրեց եւ 8,5 - 6,5 վերջնական արդիւնքով տեղի տուաւ:

Մանթիք, որ այս մրցաշարքին 8,5 կէտ ապահովողը (16 հանդիպումներու ընթացքին) պիտի շահէր աշխարհի ախոյեանի տիտղոսը (որ սակայն ՖիՏԻ կողմէ չի ճանչցուիր), ինչպէս նաեւ մեծ պարգեւ մը՝ 2 միլիոն սոլար:

37 տարեկան Գասպարով ոչ մէկ յաղթանակ կրցաւ տանել 25 տարեկան



Գասպարով (ձախին) - Զրամնիք երեկուան մրցումէն տեսարան մը:

Բրամնիքի դէմ, որ երկու յաղթանակ ապահովեց, իսկ մնացեալ 13 մրցումները աւարտեցան հաւասարութեամբ: Ռուսը առաջին յաղթանակ արձանագրած էր երկրորդ հանդիպումին:

Երէկուան ճակատագրական հանդիպումին, հաջգրի վարպետը 39րդ շարժումին հաւասարութիւն զիջեցաւ մրցակիցին, որ արդէն կարիքը ունէր կէտ կէտով տանելու վերջնական յաղթանակը:

## ՍՊԱՆԻՈՅ ՖՈՒՐԳՈՒԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### ՄԱՅՈՐԸԱ ՊԱՐՏՈՒԹԵԱՆ ՄԱՏՆԵՑ ՆԱԵՒ ՌԷԱԸ

Տակաւին անցեալ Շարաթօր Պարսերունան 2-0 արդիւնքով պարտութեան մատնած Մայորքա երկու ալ իրագործուի մըն ալ կատարեց, երբ նոյն արդիւնքով պարտութեան մատնեց այլ հսկայ մը՝ Ռէալ Մատրիտը, այլ ալ անոր դաշտին՝ «Սալբաթիկո» Պէռնասպէտի մէջ:

Այսպիսով, Ռէալ Մատրիտ կրեց եղանակի իր երկրորդ պարտութիւնը, սակայն առաջինը՝ իր դաշտին վրայ, կապի մը դէմ, որ երէկուան մրցումին արժանի էր յաղթանակի, դաշտին կերտելու իր տիրապետութեան տակ պահելով:

Վերջին դիրքը գրաւող Ռէալ Մատրիտը տար մրցում յաղթանակէ քրիկուէտը եւ ի վերջոյ յաջողեցաւ եղանակի իր առաջին յաղթանակը տանել 2-1 արդիւնքով յաղթական վերադարձալով Աթլետիքօ Պիլպոսի դաշտին: Սալբաթիկոս յաղթանակի իր կողմը նշանակեց մրցումին աւարտէն մէկ վայրկեան առաջ, այլ ալ Պիլպոսի մէկ մարպիկին շնորհիւ (սխալմամբ՝ իր բերդին ներս):

Նումանսիա պարտութենէ մը փրկուեցաւ երբ Պարսերունայի դէմ իր կատարած մրցումին աւարտէն մէկ վայրկեան առաջ նշանակեց իր հաւասարութեան կողմ (1-1), սակայն գրաւեց դասախորման վերջին դիրքը:

- Ստորեւ՝ ճիշդ հանգրուանի մրցումներուն արդիւնքները:
- Ալաւես - Ռէալ Սոսիեթատ 0-1
- Աթլետիքօ Պիլպոս - Ռէալ Մատրիտ 1-2
- Մալաղա - Օսասունա 3-1
- Ռէալ Մատրիտ - Մայորքա 0-2
- Պարսերունա - Նումանսիա 1-1
- Ռասինկ Սանթաբադա - Վիրաթալ 3-1
- Ռէալ Օվիեսո - Ռայօ Վալեքաանօ 4-1
- Ռէալ Վալադոլիտ - Էսպանիոլ 1-1
- Վալեքաանս - Սելթա Վիլո 1-1
- Տեֆորթիօ Զորունա - Լաս Փալմաս 4-0

ՊԱՍԿԱՐՈՒՄ	ՎԷՏ
1.- Վալենսիա	19
2.- Տեֆորթիօ Զորունա	17
3.- Ռէալ Մատրիտ	14
4.- Ալաւես	14
5.- Պարսերունա	13
18.- Ռէալ Սոսիեթատ	8
19.- Ռէալ Մատրիտ	7
20.- Օսասունա	6

## ՓԻՆԿ ՓՈՆԿ ԱՐԱՄԱԿԱՆ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

### Հ.Ս.Ը.Մ. Ի ԱՂՋԻԿՆԵՐԸ ԱՅՍՈՐ Կ'ԸՆԴՈՒՆԻՆ ԵԳԻՊՏԱՑԻ ԵՒ ԱԼՃԵՐԻԱՑԻ ՄՐՅԱԿԻՑՆԵՐ

Փինկ փոնկի արարական ազուճումներու ախոյեանութեան մրցաշարքին, Հ.Ս.Ը.Մ. ի աղջկանց կազմը այսօր պիտի կատարէ երկու մրցում: Առաջինին, անիկա պիտի ճակատարէ եգիպտական Ջամալէթ խումբին դէմ, իսկ երկրորդին՝ Ամալ Ռաուսպիէի (Ալճերիա) դէմ:

Առաջին մրցումը տեղի պիտի ունենայ կէսօրէ առաջ ժամը 9:30ին, իսկ երկրորդը՝ կէսօրէ ետք ժամը 4:00ին: Նշենք, թէ մրցաշարքը տեղի կ'ունենայ Զապրի դաշտին մէջ:

## ԼԻԲԱՆԱՆԻ ՊԱՍԲԵԹՊՈՒԻ 2000-2001 ԵՂԱՆԱԿԻ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԵԱՆ ԱՂՋԿԱՆՑ ՅԱՅՏԱԳԻՐԸ

Երէկուան մեր մարզական հեղով տուած էինք Լիբանանի պասքեթպոլի տղոց 2000-2001 եղանակի ախոյեանութեան երթի մրցումներուն յաւտագիրը: Այսօր կու տանք աղջկանց երթի մրցումներուն յաւտագիրը, որ տղոց նման կը

## ԱՆԳՆՈՅ ԼԻԿԱՅԻ ԲԱՍԿԵՏԱՐԳ ՄՐՅԱԿԵՐՔ

### ԱՐՍԵՆԱԸ ԵՒ ՉԵԼՍԻ ԴՈՒՐՍ ՄՆԱՑԻՆ

Անգլիոյ Լիկայի բաժնի մրցաշարքի Գ. հանգրուանի մրցումներուն արձանագրուեցան անակնկալ արդիւնքներ եւ շատ մը բարձրագոյն դասակարգին մաս կազմող խումբեր դուրս մնացին մրցաշարքէն: Այդ կազմերուն շարքին էին Արսենալ, Ասթոն Վիլա, Լալսթըր Սիթի, Չելսի, Թոթենհամ, Լիօ, Միլուոլպուրօ եւ շատ մը ուրիշներ:

Լիվըրպոլի զուտար յաղթանակ մը արձանագրեց, երբ յետ երկարած դման 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց իր հիւրը՝ Չելսին, յաղթանակի կողմ նշանակելով 101րդ վայրկեանին, շնորհիւ Ռոպի Ֆաուլըրի:

Իր կարգին, բաժակակիր Լալսթըր Սիթի դուրս մնաց, երբ իր դաշտին վրայ 3-0 արդիւնքով պարտութեան մը կրեց Ա. դասակարգի Քրիսթալ Փալասին:

Իփսուէլի եւ Մանչեսթըր Սիթի «բարտաւոր» յաղթանակներ արձանագրեցին, երբ օտար դաշտերու վրայ իրենց յաղթանակի կողմ նշանակեցին մրցումին վերջին վայրկեանին: Իփսուէլը 2-1 արդիւնքով պարտութեան մատնեց Արսենալը, իսկ Մանչեսթըր Սիթի 1-0 արդիւնքով՝ Ասթոն Վիլան:

Ստորեւ՝ Գ. հանգրուանի մրցումներուն արդիւնքները:

Արսենալ - Իփսուէլ	1-2
Ասթոն Վիլա - Մանչեսթըր Սիթի	0-1
Տերպի Գաուլթի - Նորիչ	3-0
Ֆուլհամ - Վուլվը	3-2
Լալսթըր Սիթի - Քրիսթալ Փալաս	0-3
Լիվըրպոլ - Չելսի	2-1
Նիքըտը - Պրեսթոն Սիթի	4-3
Տեֆլիտ Ուելսուոյ - Տեֆլիտ Եուլալթրա	2-1
Սաութհամթոն - Քուինսթրի	0-1
Սթոք - Պարսիք	3-2
Պրիսթոլ Ռովըրզ - Սաուրթհեմ	1-2
Թոթենհամ - Պրիմինկլի	1-3
Թրանսիլ - Լիօ	3-2
Ռաքսթրա - Մանչեսթըր Եուլալթրա	0-3
Ռեւսթ Զոմ - Պիքսթրի	2-0
Ուլմպուրթ - Միլուոլպուրօ	1-0
Ստորեւ՝ Գ. հանգրուանի մրցումներուն վիճակաձրգուծութիւնը (մրցումները տեղի կ'ունենան Նոյեմբերի վերջը):	
Ջովեմորի - Իփսուէլ	1-2
Մանչեսթըր Սիթի - Ռիմպալտըն	1-3
Պրիմինկլի - Նիքըտը	1-3
Շեֆիլդ Ուելսուոյ - Ուելսթ Զամ	3-2
Սթոք - Լիվըրպոլ	1-0
Տերպի Զաուրթի - Ֆուլհեմ	1-0
Քրիսթալ Փալաս - Թրանսիլ	1-0
Սաուրթլիքտ - Մանչեսթըր Եուլալթրա	1-0

սկսի Կիրակի, 26 Նոյեմբերին: Հ.Ս.Ը.Մ. իր առաջին մրցումը պիտի կատարէ Սաուրթալի դէմ, իր նորակառոյց դաշտին՝ «Ատու եւ Սելա Թնճուկեան» վրայ: Ստորեւ՝ երթի մրցումներուն յաւտագիրը:

Ա. ՀԱՆԳՐՈՒՄԻ ԹՈՒՆԿԱՆ	ՄՐՅՈՒՄ	ԺԱՄ	ԱՐԳՆԵՐԸ	ԳՎՇՏ
Կիրակի, 26 Նոյեմբեր	Սաթհի - Անդրանիկ	15:00ին		Զապիր Մըլիէր
Երեքշաբթի, 28 Նոյեմբեր	Հ.Ս.Ը.Մ. - Սաուրթա	18:00ին		Էօ. Էն. Պէ.Թասատտ
Երեքշաբթի, 28 Նոյեմբեր	Էօ. Էն. Պէ. - Նորթ Հեվըն	18:00ին		
Չորեքշաբթի, 29 Նոյեմբեր	Ռիաաթի - Քահրապա	18:00ին		
Կիրակի, 3 Դեկտեմբեր	Սաթհի - Հ.Ս.Ը.Մ.	15:00ին		Զապիր
Կիրակի, 3 Դեկտեմբեր	Նորթ Հեվըն - Ռիաաթի	18:00ին		Նորթ Հեվըն
Երկուշաբթի, 4 Դեկտեմբեր	Սաուրթա - Էօ. Էն. Պէ.	19:00ին		Սաուրթա
Հինգշաբթի, 7 Դեկտեմբեր	Անդրանիկ - Քահրապա	19:00ին		Անդրանիկ
Շաբթի, 9 Դեկտեմբեր	Քահրապա - Նորթ Հեվըն	18:00ին		Քահրապա
Հինգշաբթի, 14 Դեկտեմբեր	Էօ. Էն. Պէ. - Սաթհի	19:00ին		Էօ. Էն. Պէ.Թասատտ
Հինգշաբթի, 14 Դեկտեմբեր	Ռիաաթի - Սաուրթա	19:00ին		Սըլիէր
Ուրբաթ, 15 Դեկտեմբեր	Հ.Ս.Ը.Մ. - Անդրանիկ	19:00ին		
Կիրակի, 17 Դեկտեմբեր	Սաթհի - Ռիաաթի	15:00ին		Զապիր
Երեքշաբթի, 19 Դեկտեմբեր	Անդրանիկ - Նորթ Հեվըն	18:15ին		Անդրանիկ
Երեքշաբթի, 19 Դեկտեմբեր	Սաուրթա - Քահրապա	19:15ին		Սաուրթա
Հինգշաբթի, 21 Դեկտեմբեր	Հ.Ս.Ը.Մ. - Էօ. Էն. Պէ.	19:00ին		Մըլիէր
Հինգշաբթի, 28 Դեկտեմբեր	Նորթ Հեվըն - Սաուրթա	19:00ին		Նորթ Հեվըն
Հինգշաբթի, 28 Դեկտեմբեր	Ռիաաթի - Հ.Ս.Ը.Մ.	19:00ին		Թասատտ
Ուրբաթ, 29 Դեկտեմբեր	Էօ. Էն. Պէ. - Անդրանիկ	19:00ին		Էօ. Էն. Պէ. Քահրապա
Կիրակի, 31 Դեկտեմբեր	Քահրապա - Սաթհի	15:00ին		
Չորեքշաբթի, 3 Յունուար, 2001	Անդրանիկ - Սաուրթա	18:15ին		Անդրանիկ
Հինգշաբթի, 4 Յունուար, 2001	Սաթհի - Նորթ Հեվըն	19:00ին		Զապիր
Հինգշաբթի, 4 Յունուար, 2001	Հ.Ս.Ը.			

